ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Հուլիսի 5-ին Պարույր Հայրիկյանը դառնում է 39 տարեկան: Այդ 39 տարիների գրեթե կեսը նա խորհրդային զարհուրելի պատժախցերում է անցկացրել՝ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՐԲԱԼՈՒՅՍ ԳԱՂԱՓԱՐԻ համար: Մարտի 24-ից Հայրիկյանը դարձյալ ձերբակալված է: Նա կալանավորված է ոչ թե ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ, այլ՝ Ղարաբաղյան շարժմանը վճռական թափ հաղորդած լինելու, համաշխարհային հասարակական կարծիքը ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ, այսինքն՝ մեր կողմը թեքելու.
Սումգայիթի ջարդարարների իսկական հացեն մատնանշելու.
Մոսկվայի հայատյաց և սուտ տեղեկությունները արժեզրկելու, նրան որոշ կիսաբերան ճշմարտություններ ասել ստիպելու.
Երեմլի հակահայ գաղտնի քայլերը կոահելու և ժողովրդին զգուշացնելու համար:

Այսինքն Պարույր Հայրիկյանը ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՄԵՂ ՁՈՀՆ է:

Ուստի շարժումը պետք է վճռականորեն սատար կանգնի նրան:

Ի՞նչ էր ասում Պարույր Հայրիկյանը փետրվար ամսին:

Ա. Ղարաբաղյան հարցում հայության պահանջը ԲԱՑԱՌԱՊԵՍ Մոսկվայից պիտի լինի: Մենք Ադրբեջանից պահանջ չունենք, քանի որ նախ՝ Ղարաբաղը իրավազուրկ Հայաստանից բռնագրավել - իրավազուրկ Ադրբե-

ջանին է հանձնել Մոսկվան: Երկրորդ՝ արցախահայությունը Ադրբեջանից անջատվել է ինքնորոշման իրավունքով: Երրորդ՝ Ադրբեջան կոչված վարչական միավորի տերը Մոսկվան է, ոչ թե ադրբեջանական ժողովուրդը:

Բ. Երբ Քաղբյուրոն փետրվարին մերժեց արցախահայության ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը չպետք է ցույց-գործադուլը դադարեցներ: Նա պիտի դներ Խ. Հայաստանը ԹՍՀՄ-ից անջատելու խնդիրը:

Գ. Մենք մեր տասնյակ կարևոր խնդիրները ոչ թե պիտի դնենք հերթի, որպեսզի յուրաքանչյուրի վրա տարիների ԱՊԱՐԴՅՈՒՆ պայքարով ՈՒԺԱՔԱՄ լինենք, այլ ՀԱՅՐԵՆԻՔԻ և սփյուռքի բովանդակ ուժերը համերաշխ սևեռենք ՀԱՐՑԵՐԻ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ վրա՝ քանզի մեր բոլոր հարցերի լուծման ԱՄԵՆԱԿԱՐԾ ու ԱՄԵՆԱԻՐԱԿԱՆ ուղին Խ. Հայաստանի անկախացումն է՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ վերականգնումը:

Պարյուր Հայրիկյանի այս ու այլ գաղափարները փետրվարին շատերի ականջին արտառոց էին հնչում: Այժմ ազգի մեծամասնությունն է այդ կարծիքին: Ուստի եկեք հակառակորդի թակարդից դուրս պրծնենք և ազգային հերոսին ՉԱՆՋԱՏԵՆՔ ԱԶԳԻՑ ու Ղարաբաղի շարժումից:

Եկեք վերջապես հասկանանք, որ Պ. Հայրիկյանի հարցը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ հարց է: Քանզի Հայրիկյանի կալանավորումը ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ իրավունքի ՈՏՆԱՀԱՐՈՒՄ է: Իսկ նրա ազատ արձակումը՝ մեր ոտնահարված իրավունքների մասնակի վերականգնում: Հայրիկյանին ազատ արձակելու պահանջը մեր շարժումը վերջնականապես կդարձնի ազգային:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆԻՆ

Հավաքվում ենք ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ հրապարակում հուլիսի 5-ին, ժամը 18-ին:

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ

1 հուլիսի 1988թ.
Երևան